տեղեկութիւնների վրա, օրինակ Կ. Պոլսի հայոց ազգային ժողովի զեկուցումների և հայոց պատրիարքի պաշտօնական բողոքների վրա։ Բաւական է յիշել այստեղ „Тифл. Вѣстн.“ լրագրում 1876 թւին տպված մի շարք յօդուածների, որոնք հիմնված էին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի և ազգային ժողովի պաշտօնական բողոքների վրա և հետևեալ տարիների „Голосъ“ լրագրի հարուստ թղթակցութիւնները թիւրքաց հայերի թշուառ դրութեան մասին, որոնք իրանց տեղեկութիւնները նոյնպէս առնում էին պաշտօնական, ամենահաստատ աղբիւրներից։

Աւելորդ ենք համարում յիշել այստեղ այն բոլոր բարբարոսութիւնները, որ գործում էին թիւրքերը, քիւրդերը և չերկէզները ռուս-թիւրքաց պատերազմի ժամանակ....Նրանց այդ բարբարոսութիւնների նկարագրութեամբ, որ գործում էին թէ հայերի և թէ իրանց այլ հպատակ ազգութիւնների վերաբերութեամբ, լի էր ամբողջ աշխարհի մամուլը։

«Մշակի» 1878 թւի բոլոր յօդուածներից մենք կը յիշենք միայն Մէլիքզադէի յօդուածների մի շարք «Տեղեկագիրք» վերնագրով (№ № 145—150)։ Այդ յօդուածների բոլոր տեղեկութիւնները, հայոց ազգի վրա թիւրք կառավարութեան կողմից գործած ճնշումները, բարբարոսութիւնները, փայրենութիւնները՝ առնված էին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի պաշտօնական զեկուցումներից։

Հետևեալ 1879 թւին հրատարակվեցաւ «Մշակի» մէջ Գրիգոր Աբծրունու դասախօսութիւնը, որ յետոյ թարգմանվեցաւ գերմաներէն լեզուով և շուտով լոյս կը տեսնի Մոսկվայում առանձին բրոշիւրով ռուսերէն լեզուով։ Այդ գրուածքի բոլոր տեղեկութիւնները, որոնք վերաբերվում են քիւրդերի և թիւրքերի վարմունքին հայերի հետ, նոյնպէս առնված են հայոց պատրիարքարանի պաշտօնական տեղեկագիրներից։ Նոյն թւին մենք կարողացանք ձեռք բերել նոյն իսկ Կ. Պոլսում ֆրանսիերէն լեզուով հրատարակված «Earticle 61» վերնագրով երկու թէ երեք կարմիր տետրակներ, որոնք ամփոփում էին իրանց մէջ Հայաստանի զանազան կողմերի հայ առաջնորդներից Կ. Պոլսի պատրիարքարանի մէջ ստացված, հայերի վրա գործված, զանազան անարդարութիւններ, հարատևարութիւններ և բարբարոսութիւններ նկարագրող պաշտօնական հեռագիրներ։

Վերջապէս յիշենք այստեղ և «Մշակի» ներկայ 1880 թւի առաջին համարներում տպված Վահան Վ. Պարտիզակցու Լրզրումի անգլիական հիւպատոս Տրաստէրին ներկայացրած զեկուցումները (№№ 21—24)։

Ու պէտք է ասել, որ մենք յիշում ենք այստեղ աղբիւրներից ամենագլխաւորները միայն...Թող թիւրքաց կառավարութիւնը կարդայ այդ բոլոր գրուածները, որոնք նոյն իսկ թիւրքիայում հրատարակվեցան, որոնք ներկայացնում են ճնշված ազգի յուսահատված, օրհասական աղաղակը և որոնց մենք արտատպեցինք կամ որոնցից մենք միայն օգուտ քաղեցինք, առանց մեզանից ոչինչ աւելացնելու, հիմնեցինք մեր բոլոր դատողութիւնները թիւրքիայի վերաբերութեամբ։

Ինչի, ուրեմն, թիւրքաց կառավարութիւնը մեզ է մեղադրում, ինչի է արգելում նա մեր լրագրի մուտքը իր պետութեան սահմանների մէջ, երբ մեր բոլոր ասածներից և ոչ մինը հնարած իրողութիւն չէ, այլ եղել է միայն այն յուսահատական աղաղակի արձագանքը, որ նոյն իսկ թիւրքիայի հողի վրա ծնունդ առաւ, որ անդադար մեր ականջներին էր հասնում, բղխելով թիւրքիահպատակ հայի ճնշված կուրծքից....

Մենք միայն թարգման եղանք մեր համարիւն եղբայրների աղաղակների և այժմ թիւրքիան կամենում է մեզ ռուսահպատակներին արգելել ձայն հանելու, կամ գոնէ կամենում է արգելել որ մեր ձայնը չը կարողանայ հասնել Ռ. Դրան հպատակ ճնշված, ոտնակոխ արած հայերի ականջին։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ

—

Ներկայ տարվայ «Փորձ» I տետրակի ընկզբում տպած է պ. Պատկանեանի պատուական յօդուածը—Համառօտ տեսութիւն հայ պատմական գրականութեան վերնագրով։ Դիտական հեղինակը այդ յօդուածի մէջ յառաջ է բերում 'ի միջի այլոց մի համառօտ ցուցակ զանազան տեղերի, ուր գտնվում են հայկական ձեռագիրներ շատ կամ քիչ քանակութեամբ։ Այդ ցուցակը չէ, 'ի հարկէ, լիակատար. և ինքն հեղինակն էլ անշուշտ այդպէս է համարում գրած, որպէս այդ պարզ երևում է և յօդուածի վերջաբանութիւնից։ Վասն որոյ աւելորդ չեմ համարում աւելացնել այդ ցուցակի վրա իմ ունեցած տեղեկութիւնները, հրաւիրելով մեր բանասէրներին հետզհետէ լրացնել այդ ցուցակը, որ մեծ նշանակութիւն ունի ազգային մատենագրութեան զարգացման համար։

Պ. հեղինակը ցոյց է տալի Փարիզի ազգային մատենադարանի մէջ (Bibliotheque Nationale) հայոց ձեռագիրների թիւը 260։ Իսկ ես 1877 թ. հինգ ամիս շարունակ պարապելով այդ մատենադարանի մէջ 'ի միջի այլոց և հայոց ձեռագիրների հետազօտութիւնով, դուցա թիւը գտայ 273, ուրեմն 13 ձեռագրով աւելի։ Արարատի մէջ (1878 թ., փետրվար) ես տպեցի իր ժամանակ Փարիզից ուղարկած թղթակցութեամբն մի յօդուած այդ մատենադարանի հայկական ձեռագիրների մասին բաւական ընդարձակ տեղեկութիւններով, ուր ցոյց տուած եմ ոչ միայն դուցա թիւը, այլ և բովանդակութիւնը ըստ զանազան գիտութիւնների և գրչագրութեան թուականների, որքան այդ յայտնի էր յիշատակարաններից։

թէ նրա այն օրվայ վարմունքը էֆէնդու հետ անխոհեմ էր։

—Ես, ասաց նա,—դու գիտես, որ քեզ չեմ ջոկում իմ այս եօթն որդիներից, նա ցոյց տուեց վեց որդու վրա, որ նստած էին և Ստեփանիկի վրա, որ կանգնած էր։

Ներուանն սովորութիւն ունէր միշտ եօթն որդիների անունով խօսել և նրանց անունով երդվել, Ստեփանիկին ես նրանց հետ հաշուելով, բայց չը գիտէր, որ Վարդանին վաղուց արդէն յայտնի էր Ստեփանիկի աղջիկ լինելը։

—Այս եօթը որդիներիս արևը թող վկայ լինի, եթէ սուտ լինեմ ասելու, շարունակեց նա,—դու էլ իմ որդին ես. իմ տունը քո տունն է, գալիս ես, գնում ես, և որքան սիրող ուզում է, մնում ես։ Իմ դուռը քո առջև միշտ բաց է։ Բայց պէտք է գիտենաս, որ այստեղ ուրիշ երկրների նման չէ, այստեղ թօսաս էֆէնդու նման մարդիկը՝ մեծ մարդիկ են, շատ մեծ մարդիկ... Նրանք ինչ որ կամենան, կարող են կատարել։ Այս պատճառով, նրանց պէտք է ակամայ յարգել և երբեմն նրանց խօսքերի ու արարմունքների մասին պէտք է լռել...։ Ի՞նչ կարող ենք անել։ «Մի չարագործի ձեռք, ասում է առակը, եթէ չես կարող կտրել, պէտք է համբուրես և գլխիդ վրա դնես»։ Էֆէնդին, կարելի է, քեզ մի վնաս չը կարողանայ հասցնել, որովհետև այստեղացի չես, բայց մենք քո փոխարէն պիտի տուժենք նրա հասցրած վնասը։ Դու խօսել ես թուրքի առածը. «Էշից վախեցաւ և սկսեց փայտին ծեծել»....

Ներուանու խօսքերը կրկին հաւաքեցին խենթի իծանները *)։ Նա պատասխանեց.

—Թուրքերի վերաբերութեամբ մեր կողմի հայերը մի լաւ առած ունեն, ասում են՝ «Թուրքին մինչև չը ծեծես, բարեկամ չի դառնայ»։ Ես թօսաս էֆէնդուն թուրքերից չեմ զանազանում, և չատ ցաւում եմ, թէ ինչու նրան մի լաւ չը ծեծեցի, թէ նրա բարեկամութիւնը ինձ չատ հաճելի չէր կարող լինել։

Ներուանու երեսի խորշոմները աւելի կնճռոտվեցան, երևում էր պատասխանը նրան դիւր չեկաւ։ Իսկ Ստեփանիկի դէմքի վրա փայլեց մի պայծառ ժպիտ, որը չէր կարող չը նկատել Վարդանը։ Նա դեռ կանգնած էր ոտքի վրա, և որպէս տան փոքրիկը, սպասաւորութիւն էր անում, Վարդանը հիացմունքով նայեց նրա վրա, մի և նոյն ժամանակ նրա մտքից անցան այս խօսքերը. «Ահա միակ արարածը այս տան մէջ, որ համակրում է ինձ... որովհետև նա միայն է, որ զղջացել է այդ գարշելի մարդու լրբութիւնը»....

—Դուք ինքներդ թոյլ էք տալիս այս տեսակ ցած, անբարոյական, անիրաւ մարդերին բռնանալ ձեզ վրա, շարունակեց Վարդանը աւելի տաք կերպով.—որովհետև նրանց բոլոր չարագործութիւնների առջև աչքերդ փակած, համբերում էք։ Ես հասկանում եմ, երբ թուրքը, քուրդը հային հարստահարում է, ճնշում է, և նրա կենսական բոլոր ուժերը խլելով նրանից, մահացնում է։—Ես այդ հասկանում եմ և մինչև անգամ բնական եմ համարում, որովհետև նրանք դարերով այսպէս վարվել են հայի հետ և նոյն կերպով շարունակում են։ Այդ դարձել է թուրքի և քուրդի համար մի տեսակ կենսական պահանջ, առանց որին նրանք հաղիւ թէ կարող են ապրել։ Բայց երբ որ հայը վարվում է իր համազգիների հետ աւելի վատթար, քան թէ թուրքը և քուրդը, այդ եղեռնագործութեանը դժուար է համբերել։ Ես այս խօսքերը էֆէնդու երեսին ասեցի, և նա մի բառ ևս չը գտաւ պատասխանելու։

—Ես դրանից վատը կասէի նրան, խօսակցութեան մէջ մտաւ Հայրապետը,—բայց հայրս միշտ մեզ խրատում է, թէ պէտք է լուռ մնալ, թէ պէտք է զգոյշ լինել...մի օր ազատութիւն կը լինի մեզ... պէտք է համբերել... չը գիտեմ, մինչև երբ պէտք է համբերել...։

—Մինչև Ցիսուս Քրիստոսի գալուստը... հեգնօրէն պատասխանեց Վարդանը։—Բայց, ափսոս, մինչև այն ժամանակը աշխարհի երեսին մի հայ էլ չի մնայ, որ իր ազատութիւնը տեսնէ. բոլորը քուրդ կամ թուրք դարձած կը լինեն...։

—«Համբերութիւնը կեանք է»... խօսեց ծերունին քարոզի ոճով։—Մեր տէրտէրները, մեր վարդապետները միշտ այդ են քարոզում մեզ։ Ախար մի օր կը լինի, որ Աստուած կը մտաբերէ իր կորուսեալ ոչխարներին...։ Պէտք է համբերել, զաւակներս,... «համբերութիւնը կեանք է»...։

—Համբերութիւնը մահ է.... պատասխանեց պ. Դուդուկչեանը, որ մինչև այն ժամանակ չէր խօսում և լուռ լսում էր նրանց վիճաբանութիւնը։ Երիտասարդի գունատ դէմքը այժմ բոլորովին դեղնեց և նրա նուրբ, նոյնպէս գունաթափ շրթունքը սկսեցին դողդողալ։

—Համբերութիւնը մահ է... կրկնեց նա վրդովված ձայնով,—գերեզմանի մէջ միայն մարդը սովորում է համբերող լինել։... Մի այսպիսի հրէական համբերութիւնը, որ ունենք մենք, տանում է դէպի անդառնալի կորուստ։ Հրէաները շատ համբերեցին, աշխարհի բոլոր հալածանքներին դիմացան, սպասելով, թէ կը յայտնվի մի Մեսիայ, որ կը վերանորոգէ սուրբ Երուսաղէմը և կը վերականգնէ Իսրայէլի հին փառքը... և մինչև այսօր սպասում են...։ Բայց մենք մի այսպիսի ակնկալութիւն ևս չունենք, չը գիտեմ, էլ ինչ բանի ենք սպասում...։

—Մեր տէրտէրները, մեր վարդապետները համբերութիւն են քարոզում... շարունակեց նա առաջվայ մաղձոտ ձայնով.—Ախար նրանք քանդեցին մեր տունը և այս սարսափելի վիճակին հասցրին մեզ։ Եթէ կայ մի բան, որ կարող է փրկել հարստահարված և ճնշված ժողովուրդներին, դա է՝—բողոքը, ինչ կերպով և յայտնվելու լինէր նա։ Դժգոհութիւնը, տրտունջը և իր վիճակից մի աւելի բարեբախտ վիճակի ցանկանալը—ահա այն փրկարար շարժառիթները, որ կարող են մեզ ազատել սարսափելիից։ Բայց համբերութեան մէջ խեղդվում են, մահանում են այս տեսակ բարձր ձգտումները....

Ներուանին ոչինչ չը պատասխանեց։ Վարդանը և Հայրապետը բռնեցին երիտասարդի ձեռքը և բարեկամաբար սեղմեցին։ Ներուանու միւս որդիները ոչինչ չը հասկացան և իրանց մտքում ասեցին—ահա մի ուրիշ խենթ ևս....։

Ներուանին հրամայեց հիւրերի համար քնելու տեղ պատրաստեն, իսկ ինքը որդիների հետ, բարի գիշեր մաղթելով, հեռացաւ։ Ցան հարսներից մէկը, երեսը կապած, եկաւ անկողինները պատրաստեց։

Օդայի մէջ ճրագը դեռ վառվում էր։ Երկու հիւրերը իրանց անկողիններում երկար անքուն մնացին։ Պարոն Դուդուկչեանը կրկին վառեց իր կլսաա մնացած սիգարը և սկսեց ծխել։ Վարդանը նկատեց նրան.

—Բարեկամ, ձեր լեզուն անհասկանալի է. դուք հազիւ թէ կարող կը լինէք այստեղ մի գործ չինել...։ Ժողովրդի հետ խօսելու համար պէտք է հարիւրաւոր առակներ և առածներ գիտենալ...։ Քրիստոս իր առակներով աւելի գործ չինեց, քան թէ բարձր, վերացական քարոզներով։

—Այո, ես չը սովորեցի ժողովրդի լեզուն... պատասխանեց պ. Դուդուկչեանը և լռեց։

(Կը շարունակվի)

*) Իծաներ փոխաբերական մտքով դևի կամ չար ոգիների նշանակութիւն ունի ռամիկ ժողովրդի լեզուում։

Լոնդոնի հռչակաւոր բրիտանական թանգարանում (British Museum) ևս տեսայ ձեռագիրների բաժնում ապակիազարդ սեղանի մէջ պահեւեան գանազան ձեռագիրների շարքում մի հայկական պատկերազարդ ձեռագիր փոքր դիրքով: Թանգարանի հնութիւնները բացատրող պարոնը ասաց ինձ, որ թանգարանում կան բաւական հայ ձեռագիրներ և թէ մի հայ վարդապետին յանձնված է կազմել դոցա նոր ցուցակը: Ցնծոյ իմացայ որ դա նոյն Հ. Սուքիաս Պարոնեանն էր, Վենետիկի միաբան, որը կազմել էր և Փարիզի մատենադարանի հայ ձեռագիրների համար մի անձնական և բոլորովին անպէտք ցուցակ հայերէն և ֆրանսերէն, ինչպէս բացատրած եմ «Արարատ»ի մէջ տպած վերոյիշեալ յօդուածիս մէջ:

Թէպէտ ինձ շատ ցանկալի էր աւելի մօտ ծանօթանալ բրիտանական թանգարանի հայկական ձեռագիրների հետ, բայց դժբախտաբար ժամանակիս կարճութիւնը չը ներեց ինձ այդ:

Վիեննայում ևս ծանօթացայ ուսուցչապետ (պրոֆէսսոր) հայագէտ Միւլլերի հետ, որ բաւական լաւ խօսում էր ինձ հետ հայերէն գրաբար լեզուով: Դա հրաւիրեց ինձ այցելել Կայսերական Մատենադարանին, ուր ցոյց տուաւ ինձ մօտ 40 հայերէն գանազան ձեռագիրներ, աւելացնելով թէ՝ ինքն ևս ունի իր սեփական մատենադարանի մէջ 10—12 հատ հայ ձեռագիրներ:—Ի դէպ յիշեմ այստեղ որ պ. Միւլլերը շատ հետաքրքրվում էր հայոց տպած գրքերով և իմանալով, որ ես էջմիածնից եմ՝ մի առ մի համարեց այն գրքերի անունները, որ հրատարակված են էջմիածնի տպարանից վերջին 10 տարում:

Պետերբուրգի հասարակական մատենադարանում (Публичная Библіотека) նոյնպէս կան բաւական հայ ձեռագիրներ:

Կան նմանապէս մի քանի հայ ձեռագիրներ և Մոսկվայի Ռումեանցովի թանգարանում (Румянцовскій Музеумъ):

Իսկ ինչ վերաբերվում է հայերէն հին և նոր տպած գրքերին, (դրքա չեն վերաբերվում պ. Պատկանեանցի յօդուածին), դրքա կան, գոնեա 2—3 հատով, եւրոպական մինչև անգամ մանր քաղաքների փոքր ի շատէ հարուստ մատենադարաններում: Այսպէս օրինակ, փոքր Գօթայի (Գերմանիա) քաղաքային մատենադարանի մէջ ես տեսայ մի քանի հատ հին տպագրութեան հայերէն գրքեր: Նոյնպէս Եոգէնի (փոքրիկ զուգ հանքային ջրերով Ֆրանկֆուրտ Մայնի գետի վրա քաղաքի մօտ) փոքրիկ ընթերցարանի մէջ, որ նշանակուած է հիւանդների համար, կար մի հայերէն գիրք: Վերջապէս՝ Փարիզի և եւրոպական միւս մեծամեծ քաղաքների նշանաւոր գրավաճառանոցներում, այլ և փողոցների մանր գրավաճառների (բուքինիստ) մօտ դուք շատ անգամ կը պատահէք հայերէն տպած գանազան գրքերին: Նոյնը լինում է Պետերբուրգում, Մոսկվայում, և այլն:

Վահան վարդապետ Բաստամեան

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀՈՎԱՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԸ

—

Կենդանիների հովանաւորութեան Թիֆլիսի ընկերութեան փոխ-նախագահը նախագահի տեղ կանոնադրութեան 23-դ յօդուածի հիման վրա, հինգշաբթի, մարտի 20-ին, երեկոյեան 7½ ժամին գիւղատնտեսական ընկերութեան բնակարանի մէջ կենդանիների հովանաւորութեան Թիֆլիսի ընկերութեան անդամների ընդհանուր ժողով նշանակելով, պարտք է համարում յայտնել, որ այդ ժողովի ժամանակ կանոնադրութեան 10, 11, 12 և 14-դ յօդուածների հիման վրա ձայնի իրաւունք կունենան ընկերութեան պատուաւոր, իսական և աշխատակից անդամները: Այդ ժողովի մէջ, բացի ընթացող գործերը, կը քննվին հետևեալ հարցերը. կենդանիների բժշկանոցի Թիֆլիսի մէջ բացանելու օրվայ հարցը, 1880 թուականին Բրիւսսելի մէջ լինելու կենդանիների հովանաւորութեան միջազգային կոնգրէսի հարցը, կենդանիների հովանաւորութեան Թիֆլիսի ընկերութեան գոյութեան առաջին երեք տարիների գործունէութեան հաշիւ կազմելու հարցը, մի քանի պաշտօնական անձանց ընտրութեան և սրա նման հարցեր: Ցանկալի է, որ այդ ժողովին ձայնի իրաւունք ունեցող անդամները որքան կարելի է թուով շատ հաւաքվին:

ՆԱՄԱԿ ԲԱԳԴԱՏԻՑ

—

Մարտի 3-ին

Ձեր պատուական լրագրի մէջ հաղորդում էք մեզ տխուր լուրեր Վանայ սովատանջների մասին, ուստի զգնելով մեր եղբայրակիցներին, հաւաքեցի վաթսուն և հինգ ռուբլ (65 ռ.,) կը խնդրենք հասուցանել Վանայ սովալուկներին և տպել ձեր լրագրի առաջիկայ թերթերից մէկում նուիրատուների անունները:

Գրիգոր Մանդասարեան 3 ռ., Աւետիք Մ. Ստեփանեանց 2 ռ., Շամիր Շախսուվարեանց 2 ռ., Մամիկոն Հայրապետեանց 1 ռ., Ներսէս Սարգիսեանց 1 ռ., Յովհաննէս Գրիգորեանց 50 կ., Եփրէմ Ջաւարեանց 1 ռ., Федоръ Ивановичъ Линковичъ 1 р., Եագոր Ալավերդեանց 2 ռ., Կարապետ Լազարեանց 1 ռ., Եղիայ Եղիազարեանց 1 ռ., Василій Ивановичъ Степановъ 1 р., Алексей Петровичъ Шатуновъ 1 р., Ժամհարեանց 2 ռ., Խաչատուր Խաչիկեանց 1 ռ., Անհայտ անն 1 ռ., Աստուածատուր Կարապետեանց 1 ռ., Сальтиковъ 1 р., Բաղդասար Յակոբեանց 2 ռ., Գրիգոր Ոսկանեանց 2 ռ., Պօղոս Գալուստեանց 2 ռ., Գրիգոր Ղալէչեանց 1 ռ., Դաւիթ Տէր-Խաչատուրեանց 2 ռ., Մինաս Ստեփանեանց 1 ռ., Սարգիս Եաւրումեանց 2 ռ., Յակովբ Լամբրդ 1 ռ., Ազէքսանդր Նազարեան 3ռ., և ես 25 ռ. 50 կ.: Գումարն է 65 ռ.:

Սիմէոն Արզումանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Հասարակութեան ուշադրութիւն ենք դարձնում ռուս «Кавказъ» լրագրում տպված պ. Մ. Սաղաթէլեանի մի շարք յօդուածների վրա «Обзоръ армянской періодической печати» (Հայոց պարբերական տպագրութեան տեսութիւնը) վերնագրով. Առաջին յօդուածը պարունակում է իր մէջ պատմական տեսութիւնը հայոց տպագրական գործի, երկրորդ յօդուածը «Մեղու Հայաստանի»ի լրագրի քննութիւն է տալիս, երրորդ յօդուածը քննում է «Մշակ» լրագիրը, իսկ չորրորդի մէջ հեղինակը դիտաւորութիւն ունի իր հայեացքը յայտնել «փորձ» ամսագրի վրա: Այդ յօդուածներից երեք առաջինները արդէն հրատարակվեցան:—(Кавказъ լրագրի №№ 69, 73 և 76):

—

Արդէն մօտ երկու շաբաթ է որ Ռուսաստանի փոստը ստացված չէ Թիֆլիսում, կովկասեան սարերի անանցնելի լինելու պատճառով:

—

Ստացանք յօդուտ Վանի սովալուկների պ. Թ-եանցից 2 ռուբլ:

—

Քանի մի շաբաթ սրանից առաջ մենք ուղարկեցինք Կովկասեան բժշկական ընկերութեանը մի կտոր հաց, որ ստացած էինք Չին-Նախիջևանից, խնդրելով ընկերութեանը հետազօտել այդ հացը քիմիապէս և միկրոսկոպի միջոցով, որովհետև, մեր կարծիքով. այդ հացը գրեթէ ալիւր չէր պարունակում իր մէջ, այլ բաղկացած էր մեծ մասամբ աւազից և թեփից: Այժմ յետ ստացանք այդ կտոր հացը բժշկական ընկերութիւնից մի պաշտօնական թղթով, որի մէջ ասված է, թէ ընկերութիւնը չունենալով իր մօտ մի լաբորատորիա, չէր կարող հետազօտել այդ հացը, բայց եթէ «Մշակի» խմբագրութիւնը առանձին նպատակ ունի, կարող է դիմել Թիֆլիսի բժշկական վարչութեանը: Ցաւալի է, որ մեզ մօտ ամենը բան թղթերը գրելու վրա է հիմնված: Մեր բժշկական ընկերութիւնը պաշտօնական թղթերը գրելով է զբաղված, կարծես թէ հասարակական օգուտը աչքի առջև ունենալով, ինքն ընկերութիւնը չէր կարող հասցնել այդ կտոր հացը հետազօտելու համար ուր հարկն է, այլ անպատճառ մեզ պէտք է վերադարձնէր, որպէս զի առիթ ունենար նոմէրով մի աւելորդ թուղթ գրել:

—

Լսում ենք թէ Թիֆլիսի հայոց հոգևոր կօնսիստորիան հաւաքելով իր հոգևորականների ձեռքով փոքր յօդուտ Վանի սովատանջների, այս օրերս հասցրեց այդ փոքրից 1000 ռուբլ կիւպէկնեկանի տան Թիֆլիսի բաժնին, կ. Պոլսի մատնաժողովին ուղարկելու նպատակով. Շատ ցանկալի է որ ամեն տեղի մեր հոգևոր իշխանութիւնը յօդուտ սովալուկների իր բոլոր հաւաքած դումարները հասցնէր մատնաժողովին այդ ճանապարհով և հաւաքած փոքրերի հաշիւը տպէր մեր լրագրերների մէջ. կամ թող մեր հոգևոր հայրերը բարեհաճեն իրանց բոլոր հաւաքած փոքրը ուղղակի հասցնել մեր լրագրերի խմբագրութիւններին և մենք յանձն կառնենք ուղարկել, ուր հարկն է:

—

Ստացանք յօդուտ Վանի սովատանջների 3 ռուբլ Թիֆլիսարնակ տ. Մարիամ Կամսարականից:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԱՒՐՈՍԻ ՍՏՈՐՈՒԷՆ ՁԱՅՆ

—

Գիտնալով որ Հայաստանի ուրախառիթ լուրերն դուք հիւրընկալելու հաճութիւն և ձեր ազնիւ ընթերցողներն ալ կարդալու մեծ փափաք ունին, բերկրութեամբ սրտի պատեհութիւն կունենամ հետևեալը գրել:

«Արարատեան» ազգօգուտ Ընկերութեան Տաւրոսեան վարժարանաց երկրորդն է Գրիգի Խուփս գիւղի վարժարանը, որ յիշեալ Ընկերութեան Դորձ. ժողովոյ անդամ և ի Տաւրոս ներկայացուցիչ Մեծ. Պետրոս էֆ. Վասիլեանի հոգոզութեան ներքև հիմնարկուած և նորա համբերատար աշխատակցութեամբ արտաքին շինութիւնը աւարտած էին ըստ մեծի մասին անցեալ նոյեմբերի վերջերը, սակայն անցեալ աշնան անընդհատ և յորդահոս անձրևներն ու այս տարուայ ծանր ձմեռը արգելք եղան ներքին շինութիւնքն ևս աւարտելու:

Աստանօր նուիրական պարտիք մը կզգամ հոգւոյս մէջ բոլոր ազգասիրաց զիւղացւոց կողմանէ երախտապարտ սրտիւ շնորհակալութիւն յայտնել, նախ «Արարատեան» ազգօգուտ Ընկերութեան, որ Տաւրոսի լուսաւորութեան մեծ գործոյն անվեհեր ձեռնարկած և ամենայն անձնուիրութեամբ աշխատութիւն ու զոհողութիւն չը խնայէր, և ապա մասնաւորապէս Մեծ. Պետրոս էֆ. Վասիլեանի, որ անձնուրացութեամբ, համբերութեամբ և անխոնջ աշխատանօք սուղ միջոցի մէջ կարող եղաւ այսպիսի հոյակապ վարժարան մը հասուցանել Տաւրոսի արևելեան ստորոտը:

Տաւրոսեան վարժարանաց ընդհանուր տեսուչ Մեծ. Զարեհ Կ. էֆ. Թորոսեանն անցեալ յունվար 27-ին այսր ժամանեց Բէրրիէն և ուղղակի նոր վարժարանը այցելելէ յետոյ, ազգու կերպիւ յորդորեց գիւղացիները, որպէս զի առ այժմ անմիջապէս վարժարանի ներքին յարկը պատրաստուի: 2—3 աւուր մէջ պատրաստուեցաւ և գրասեղանները հոն զետեղուեցան: Փետրվար 1 առաւօտեան ժամերգութենէն վերջ բոլոր աշակերտք և ծնողք եկեղեցւոյ մէջ հաւաքեալ էին Մեծ. Տեսուչ էֆ.-ին հրամանաւ. ի՞նչ սրտառուչ և զգեցիկ տեսարան էր: Աղքատիկ ծնողք խնդութեան արտասուօք և մատաղերամ մանկունք գեղաժպիտ դիմօք ողջունեցին Մեծ. Տեսուչ էֆ.-ին յեկեղեցի գալուստը, ուրկէ Ազգ. երգերով և օրհնութեան մրմունջներով հանդիսաւոր ուղղակի վարժարանը գնացին: Ուր Մեծ. Տեսուչ էֆ. երկար և ազգու ատենախօսութեամբ մը բացատրեց թէ ի՞նչ է Արարատեան ընկերութեան փափաքը և ի՞նչ բարեկարգեալ վարժարան մը. թէ ի՞նչ է իրենց պարտիքը վարժարանի և ընկերութեան մասին, և թէ յորմէ կը կայանայ իրենց բարօրութիւնը, և թէ վերջապէս միայն ճշմարիտ դաստիարակութեամբ կարելի է գաւառական հարստահարութիւնները բառնալ և Ազգին փրկութեան խնդիրն իրագործել:

Ակէ յետոյ Խուփսի քարոզիչ Արժ. Ներսէս վարդապետ Բշնունին օրհնեց Ընկերութեան ազգանուէր ջանքերը՝ յաջողութիւն և յարատևութիւն մաղթելով. նոյնպէս աղքատիկ գիւղացիք սրտեռանդն շնորհակալութեամբ օրհնեցին իրենց բարերարները: Այսպէս վերջացաւ սոյն զեղչական հանդէսը: Վարժարանի բացման նաւակատեաց փառաւոր հանդէսը առաջիկայ գարնան վերնայարկին բուն սրահին մէջ պիտի կատարուի: Այս նշանաւոր օրը Խուփսի համար նոր դարաշրջիւ մը կրնայ համարուիլ:

Բայց, Խմբագրապետ տէր, միտքդ Գրիգի Խուփս գիւղը այսպէս յուսալից բերկրութեան մէջ է, անպին ամբողջ գաւառը մտաւորապէս, բարոյապէս և քաղաքականապէս թշուառ կացութեան մէջ կը գտնուի. աստանօր կը պարծիմ քանի մը ցաւալի ճշմարտութիւններ յայտնել և Ազգ. Պատրիարքարանի ուշադրութիւնը հրաւիրել հոս:

Գաւառիս Առջ. փոխանորդ, Խորէն վարդապետ Շահնազարեանի թուլութիւն ու անտարբերութիւնը մեծ վնաս կը գործէ աստանօր, իր պաշտօնին մէջ հաստատուն մնալու նպատակաւ օր մը այս ինչ և հետևեալ օրը ուրիշի մը քմաց խնկարկելու վատ քաղաքականութեան կը ծառայէ, թէև գինքը սիրող բնաւ չը կայ:

Գաստապայի՝ գաւառիս կեդրոնատեղւոյն՝ գպրոցաց անհարգութիւնը և տարւոյն մեծ մասը փակ մնալը և գիւղերէից մէջ բնաւ գպրոց չը կենալը սոսա բնաւ հոգը չէ: Մինչդեռ այսօր յետին գիւղացին անգամ լիովին կը զգայ թէ ազգին փրկութիւնը միայն դաստիարակութեամբ կարելի է իրագործել, սակայն ցաւալին այն է որ Խորէն վարդապետը կը կարծէ թէ, հասարակ ոստիկանի մը պէս իր հասոյթներն հաւաքելէն զատ ուրիշ պաշտօն մը չունի ասատանոր: Հայաստանեայց եկեղեցւոյ կանոնաց հակառակ ամուսնութեանց հրաման տալը, իրեն մեծ շահու աղբիւր մ'է: Անցեալները հանրագիր մը կը կնքուէր ժողովրդեան մէջ զինքը պաշտօնանկ ընելու համար, բայց Խորէնը հովն եկած ծակը շուտով գտաւ, և ամեն բան կարգադրեց:

Տաւրոսի լուսաւորութիւնը, Խմբագրապետ տէր, միմիայն ընկերութեանց աշխատութեամբ կարելի չէ, այլ այս զօրութեան հետ պէտք է միանայ նաև բանիրուն և գործունեայ Առաջնորդաց աջակցութիւն ալ, որպէս զի ասով ժողովրդին ոյժը միանայ և լուսաւորութեան գործոյն յաջողութեանը երաշխաւորի:

Կը փափագիմք որ Ազգ. Պատրիարքարանը այս կէտը ուշադրութեան առնու և Տաւրոսի շրջակայից առաջնորդութիւնն կամ արժանաւորաց յանձնէ և կամ արդէն կեցածներուն հարկ եղած հրահանգներն ուղղէ, 'ի դիւրութիւն Տաւրոսի լուսաւորութեան գործոյն:

(Թէրճեմանը Էֆքեար)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԿԱՐՈՒԼ, 17|29 մարտի: Կարուլի և Դանդամակի մէջ պատերազմական գործողութիւնները նորից սկսվցան: Թշնամին յարձակվեցաւ Բատի ամրոցի վրա, սպանեց 13 մարդ, վիրաւորեց 19:

ԼՈՆԴՈՆ, 17|29 մարտի: Կարուլից հեռագրում են, որ Մահմէդչանի և Խազարաթի մէջ կռիւը շարունակվում է: Կասկածում են, որ Մահմէդչանը յաղթվի: (Լուր է տարածվել, որ ապստամբութիւն է մտադրված հաղորդակցութեան գծի վրա): Լոնդոնի մէջ սաստիկ զրգռումն է տիրապետում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 մարտի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 93⅝ ռ., երկրորդ 93 ռ., երրորդ 93 ռ. 50 կ., չորրորդ 93⅛ ռ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 224 ռ. 50 կ., երկրորդ 220 ռ. 75 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90⅝ ռ., երկրորդ 90 ռ. 50 կ., երրորդ 90⅝ ռ., ոսկի 7 ռ. 77 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 25⁷/₃₂ պէնս, ռուսաց 100 ռուբլ Գերմանիայի վրա արժէ 215 մարկ, Փարիզի վրա 265 ֆր. 75 սանտիմ: Բորսայի արամադրութիւնը հանգիստ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ